



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ



European Bank  
for Reconstruction and Development

Երևանի քաղաքապետարան

**ՀԱՅԱՍՏԱՆ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ –  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

«ESDD5»

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**27 մայիսի, 2015թ**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ հ. C29500/AMIF-2014-07-07



Պատվիրատու՝

**Երևանի քաղաքապետարան**

Խորհրդատու՝ համատեղ ձեռնարկություն



**«BERNARD Ingenieure ZT GmbH»**

**«HYDRO INGENIEURE Umwelttechnik GmbH»**

Բանինֆշտրասե 19

Շտայներ լանդշտրասե 27ա

A-6060 Հալ-ին-Տիրոլ, Ավստրիա

A-3504 Կրեմս-Շտայն, Ավստրիա

**Ներկայացման գրաֆիկ**

**ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ** 7332\_Solid\_Waste\_Yerevan\_ESDD\_05\_20150617\_ARM.docx

<b>ԽՄԲԱԳՐՈՒՄ Հ.</b>	<b>ԱՄՄԱԹԻՎ</b>	<b>ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>
00	19.12.2014	Նախնական տարբերակ
01	27.02.2015	Վերանայված տարբերակ I
02	01.04.2015	Վերանայված տարբերակ II
03	27.04.2015	Վերանայված տարբերակ III
04	19.05.2015	Վերջնական տարբերակ (հրապարակման համար)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԷՋ

- 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (ԲՍԳԾ) ..... 4**
- 1.1 Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը՝ աղյուսակի տեսքով .... 6
- 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 25**

### 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (ԲՄԳԾ)


Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՄԳԾ) մշակումը իրականացվել է Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը իրականացնելուց հետո: Փաստաթուղթը հաշվի է առնում բնապահպանական և սոցիալական գնահատման արդյունքները և ազդեցության ենթարկված շահառուների հետ հանդիպումների արդյունքները:

Պատվիրատուն կմշակի և կիրականացնի ազդեցությունների մեղմացման և կատարողականի բարելավման միջոցառումների և գործողությունների ծրագիր, որն ուղղված կլինի հատկորոշված բնապահպանական և սոցիալական խնդիրներին, ազդեցություններին և հնարավորություններին և իրենից կներկայացնի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՄԳԾ): Բացի այդ, ԲՄԳԾ-ը կարևոր փաստաթուղթ է, որը կուղղորդի հայտատուին՝ ապահովելու համար բնապահպանական և սոցիալական մոդելների հետագա արդյունավետ իրականացումը:

Մեղմացումը ներառում է.

- ազդեցությունից լիովին խուսափելը՝ չիրագործելով որևէ գործողություն կամ գործողության բաղադրիչ
- ազդեցությունները նվազագույնի հասցնելը՝ սահմանափակելով գործողության և դրա իրագործման աստիճանը կամ ծավալը կամ, օրինակ՝ շինարարական միջոցառումներ իրականացնելը՝ ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար
- ազդեցությունների հետևանքները շտկող միջոցառումներ իրականացնելը՝ շրջակա միջավայրը վերանորոգելու, վերականգնելու կամ վերակառուցելու միջոցով
- ժամանակի ընթացքում ազդեցությունը նվազեցնելը կամ դրա հետևանքների վերացնելը՝ գործողության իրականացման ընթացքում իրականացնելով պահպանման և պաշտպանության միջոցառումներ, օրինակ՝ փոխելով վարվելակերպը
- ազդեցության հասցրած վնասը փոխհատուցելը՝ վերականգնելով կամ տրամադրելով փոխարինող ռեսուրսներ կամ միջավայր

Միջոցառումների նախընտրելի հաջորդականությունը հետևյալն է.



Մեղմացման միջոցները և գործողությունները սահմանվում են այնպես, որպեսզի ծրագրի նախապատրաստմանը, մշակմանը, գործարկմանը և ավարտին վերաբերող բոլոր փուլերը իրագործվեն համաձայն կիրառվող օրենքների, կանոնների և կատարողական պահանջների (ԿՊ):

ԲՄԳԾ-ի համար պահանջվում է երկարաժամկետ և փուլային մոտեցում, անհրաժեշտ է

նաև հաշվի առնել ապագա ակնկալվող նորմատիվային պահանջները: ԲՄԳԾ-ի առանցքային խնդիրն է ազդեցություններից խուսափելը, իսկ անհնարինության դեպքում՝ մեղմող միջոցառում կիրառելը՝ օգնելով նվազագույնի հասցնել կամ նվազեցնել հնարավոր ազդեցությունները և հասցնելով դրանք ընդունելի մակարդակների:

ԲՄԳԾ-ը կփաստաթղթավորի բնապահպանական և սոցիալական առանցքային խնդիրները, դրանց լուծման համար կիրառվելիք համապատասխան գործողությունները, ինչպես նաև ցանկացած գործողություն, որն ուղղված կլինի բնապահպանական և սոցիալական օգուտների ապահովմանը:

Ըստ ԲՄԳԾ-ի՝ տարբերակում են ընդհանուր և տեղական մակարդակ:

Փաստաթղթի նպատակն է.

- սահմանել ՎՋԵԲ ԿՊ-ին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերը

Բացի ՎՋԵԲ 2008թ.-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականությունից [այսուհետև՝ ՎՋԵԲ ԿՊ հ.], ԲՄԳԾ-ին վերաբերում են նաև հետևյալ ուղեցույցերը և հանձնարարականները.

#### ԵՄ հանձնարարականներ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանձնարարական (ՇՄԱԳ) – Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի՝ 2014 թ. ապրիլի 16-ի Հանձնարարական 2014/52/ԵՄ, ըստ որի փոփոխություններ են կատարվել Հանձնարարական 2011/92/ԵՄ-ում, որը վերաբերում էր պետական և մասնավոր որոշակի ծրագրերի ազդեցության գնահատմանը [այսուհետև՝ ԵՄ - ՇՄԱԳ]
- ԵՄ Խորհրդի՝ 1999 թ. ապրիլի 26-ի Հանձնարարական 1999/31/ԵԽ, որը վերաբերում է թափոնների աղբավայրին [այսուհետև՝ ԵՄ թափոնների աղբավայր]
- ԵՄ Խորհրդի՝ արդյունաբերական արտանետումների մասին 2010/75/ԵՄ (աղտոտման կանխարգելման և վերահսկման համապարփակ) հանձնարարականը [այսուհետև՝ ԵՄ ԱԱՀ]

#### ՎՋԵԲ ուղեցույցեր

- ՎՋԵԲ ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների գնահատման մեթոդաբանություն, 2010 [այսուհետև՝ ՎՋԵԲ ՋԳ]
- ՎՋԵԲ գենդերային ռազմավարական նախաձեռնություն [այսուհետև՝ ՎՋԵԲ ԳՌՆ]
- ՎՋԵԲ գենդերային 1-ին մեթոդական ուղեցույց [այսուհետև՝ ՎՋԵԲ Գ1]
- ՎՋԵԲ գենդերային հարցերով ուսումնասիրությունների անցկացման մեթոդների հավաքածուներ 1 և 2 [այսուհետև՝ ՎՋԵԲ ԳՄՀ]

#### Հայաստանի օրենսդրություն (ՀՀ օրենք)

- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք [այսուհետև՝ Հավասար իրավունքների մասին ՀՀ օրենք]

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 21.06.2014 [այսուհետև՝ ՇՄԱԳՓ ՀՀ օրենք]
- Թափոնների մասին ՀՀ օրենք, 2014 թ.-ի նոյեմբեր [այսուհետև՝ Թափոնների մասին ՀՀ օրենք]
- ՀՀ անտառային օրենսգիրք [այսուհետև՝ ՀՀ անտառային օրենսգիրք]

### Այլ ստանդարտներ

- ՄԱԿ (Միջազգային աշխատանքային ստանդարտներ) [այսուհետև՝ ՄԱՍ]
- ՇՄՊԳ – ԱԼԱՄ (Առկա լավագույն արդյունավետ միջոցները աղբավայրերի ոլորտի համար. աղբահանության առկա լավագույն արդյունավետ միջոցները. աղբավայրերի աշխատանք) [այսուհետև՝ ԱԼԱՄ]
- 

### 1.1 Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը՝ աղյուսակի տեսքով

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԱՐԴԱԿ</b>							
CO1	<i>(ԲՄԳԾ իրականացում)</i> Պատրաստել և ներկայացնել հաշվետվություններ ԲՄԳԾ-ի կարգավիճակի, բողոքների ուսումնասիրության և բավարարման, ինչպես նաև բնապահպանության, առողջապահության և անվտանգության (ԲԱԱ) տեսակետներից ծրագրի կատարողականի վերաբերյալ:	ԲՄԳԾ իրականացման մշտադիտարկում	ՎՋԵԲ ԿՊ1-10	Երևանի քաղաքապետարան	Նվազագույն պահանջներ տարեկան հաշվետվություն	Գնահատում էթե ԲՄԳԾ-ի շրջանակին է վերաբերում, ապա բացթողումների վերլուծություն (պայմանագիր, շինարարական աշխատանքներ)	
CO2	<i>(Շահառուների ներգրավում)</i> Կապվել շահառուների ներգրավման ծրագրի (ՇՆԾ) կողմից սահմանված շահառուների հետ և տեղեկացնել նրանց Ընդունել և իրականացնել Շահառուների ներգրավման ծրագիր (ՇՆԾ)	Արդյունավետ հաղորդակցություն շահառուների հետ: Վաղ ծանուցում  Ներգրավվածության օրենսդրական պահանջները	ՎՋԵԲ ԿՊ10  ՀՀ օրենք	Երևանի քաղաքապետարան	Մինչ ծրագրի իրականացումը	Բողոքների հետ աշխատանքի և բավարարման վերաբերյալ արձանագրություններ  Խուսափում բողոքներից	Անկախ հասարակական կազմակերպություն է անհրաժեշտ Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային ծրագիրն իրականացնելու համար
CO3	<i>(Բ+Մ կառավարման ուսումնասիրություն)</i> Ուսումնասիրել և վերանայել Բ+Մ կառավարման ուսումնասիրությունը՝ Բ+Մ կառավարման ընթացքի վերահսկման արդյունքներից բխող առաջարկությունները հաշվի առնելու համար և հավաստիանալու, որ առկա է պատասխանատու	Աղբավայրերի արդիական պահանջների հստակ կառավարում  Պոտենցիալ	ՎՋԵԲ ԿՊ1 ՎՋԵԲ ԿՊ2 ԱԼԱՍ	Երևանի քաղաքապետարան  Տեխնիկական աջակցություն	2015-ի հունիս-օգոստոս, այլ պարագայում՝ կախված ծրագրի իրականացման գործընթացից	Աղբավայրի տարածքի պոտենցիալ նոր շահագործողին ներկայացվող պահանջների	Մրցույթի ընթացքում, պոտենցիալ հայտատուները պետք է ապացույցներ

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>անձ, որը կստանձնի ծրագրի ԲԱԱ պարտականությունները, ինչպես նաև ստեղծել կազմակերպական կառույց, որը կարտացոլի առանձին շինարարական տարածքների (օրինակ՝ նյութերի պահուստավորման համար նախատեսված տարածքի) ֆունկցիոնալ հաղորդակցությունը և խորհրդի կառավարումը (ԲՄԳԾ պետք է ներառվի տենդերային մրցույթի պահանջներում): Տեխնիկական պահանջները (ՆԻՄ կողմից, տե՛ս CO 4) անհրաժեշտ են նախագիծը պատշաճ մակարդակով իրականացնելու համար: Տեխնիկական նախագծի մանրամասն մշակումից հետո, անհրաժեշտ է ևս մեկ անգամ վերանայել ներկայացվող առաջարկությունները:</p>	<p>հայտատուի հստակ աշխատանքային կենսագրական</p>		<p>ՆԻՄ կողմից</p>		<p>Իմացություն</p>	<p>ներկայացնեն իրենց որակավորման վերաբերյալ:                      ԲՄԳԾ պահանջները պետք է ընդունվեն:</p>
<p>CO4</p>	<p>(ՆԻՄ Նախագիպը իրականացնող մարմին)                      ՆԻՄ ձևավորում՝ ներգրավելով սեփական և հրավիրյալ փորձագետների, անձնակազմի՝ նախագծի շրջանակում բնապահպանության, աշխատանքի հիգիենայի և անվտանգության, ինչպես նաև սոցիալական հարցերը կարգավորելու համար բավարարար մասնագիտական հմտությունների և կապակառուների՝ ԲԱԱ կառավարման պատշաճ ապահովում:</p>	<p>Խորհրդատվական գործառույթների թափանցիկ կառավարում</p>	<p>Լավագույն պրակտիկա ՎՋԵԲ ԿՊ1</p>	<p>Սեփական և հրավիրյալ փորձագետներ և խորհրդատուներ</p>	<p>Հունիս-օգոստոս 2015 կամ կախված նախագծի իրականացումից</p>	<p>Համապատասխան մասնագիտական պատրաստվածությամբ անձնակազմի առկայություն, հաշվետվությունների ներկայացում՝ համաձայն ԲՄԳԾ և ՇՄՍԿՀՈՒԱ իրականացման</p>	



h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
						պահանջների	
CO5	<p><i>(Կորպորատիվ քաղաքականության իրագործում - Աշխատանքային պայմաններ)</i></p> <p>Մշակել պաշտոնական զբաղվածության քաղաքականություն, որը կընդգրկի դիսկրիմինացիայի, հավասար հնարավորությունների, երիտասարդների զբաղվածության (նվազագույն տարիք), աշխատավարձերի (աշխատավարձերի մակարդակներ, նորմալ և արտաժամյա) աշխատանքային ժամերի, պարգևատրումների, աշխատողների համար բողոքներ ներկայացնելու մեխանիզմների, աշխատանքից հեռացնելու, արհմիությունների ճանաչման, կոլեկտիվ բանակցությունների, առողջության և անվտանգության, անհանգստացնելու, հարկադիր աշխատանքի, վախեցնելու, սթրեսի, կաշառք տալու, կոռուպցիայի և այլ հարցեր: Զբաղվածության քաղաքականությունները պետք է անդրադարձնան ՎՋԵԲ ԿՊ 2-ին:</p>	<p>Համապատասխանություն սոցիալական և զբաղվածության քաղաքականություններին</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ2                  Աշխատանքի միջազգային կազմակերպություն (հարկադիր աշխատանք, մանկական աշխատանք, նվազագույն տարիք)</p>	<p>Երևանի քաղաքապետարան                  Տեխնիկական աշակերտության ՆԻՄ կողմից</p>	<p>2015-ի հունիս-օգոստոս, այլ պարագայում՝ կախված ծրագրի իրականացման գործընթացից</p>	<p>Աղբավայրի տարածքի պոտենցիալ նոր շահագործողի ներկայացվող պահանջների իմացություն                  Սոցիալական և զբաղվածության քաղաքականություններ</p>	<p>Մրցույթի ընթացքում, պոտենցիալ հայտատուները պետք է ապացույցներ ներկայացնեն իրենց որակավորման վերաբերյալ: ԲՄԳԾ պահանջները պետք է ընդունվեն:</p>
CO6	<p><i>(Համապատասխանություն ԲԱԱ տեսակետից)</i></p> <p>Որպես մրցույթային գործընթացի մաս՝ իրականացնել մասնակիցների ԲԱԱ կառավարման քաղաքականությունների, ընթացակարգերի և կառավարման կարողությունների գնահատում                  Բոլոր ապագա կապալառուներին տեղեկացնել Բնապահպանական կառավարման ծրագրի, որպես ՇՄՄԱԳ հաշվետվության մասի, և (ԲԿԾ)</p>	<p>Նվազագույնի հասցնել առողջական և անվտանգության ռիսկերը                  Նվազագույնի հասցնել բնապահպանական</p>	<p>ԱԼԱՄ                  ՎՋԵԲ ԿՊ 1, ՎՋԵԲ ԿՊ 2,</p>	<p>Երևանի քաղաքապետարան                  Տեխնիկական աշակերտության ՆԻՄ կողմից</p>	<p>Պայմանագրի հետ կապված Կհաջորդի մշտադիտարկումը</p>	<p>Մրցույթի մասնագիտը                  Ստուգումների հաշվետվություններ</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ / ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	և ՇՄՄԿՀՈՒԱ մասին:	ռիսկերը					
CO 7	<p><i>(Երևանի քաղաքապետարանի ազմակերպական հնարավորությունները)</i></p> <p>Ուսումնասիրել Երևանի քաղաքապետարանի և շահագործող ընկերության ֆունկցիոնալ հաղորդակցությանն առնչվող կազմակերպական կառուցվածքը և վերհանել թերությունները (ԲՍԳԾ պետք է ներառել տեղեկատվային մրցույթի պահանջներում)</p>	Բարդ պահանջների թափանցիկ կառավարում Պոտենցիալ մատակարարի աշխատանքային պարտականությունների հստակ ձևակերպում	ՎՋԵԲ ԿՊ1 ՎՋԵԲ ԿՊ 2	ՎՋԵԲ	Նախքան շինարարական աշխատանքներն իրականացնելը	Պոտենցիալ նոր շահագործողի տեղեկացվածություն՝ պահանջների վերաբերյալ	<p>Տեղեկատվային մրցույթի անցկացման ընթացքում պոտենցիալ մատակարարները պետք է իրենց համապատասխանության ապացույցներ ներկայացնեն</p> <p>Պետք է հիմք ընդունվեն ԲՍԳԾ պահանջները</p>
CO 8	<p><i>(Հնարավորությունների ընդլայնում)</i></p> <p>Որոշ ոլորտներում Երևանի քաղաքապետարանի հնարավորությունների ընդլայնում՝ ՎՋԵԲ պահանջներին համապատասխանություն ապահովելու համար</p>	ՎՋԵԲ ԿՊ թափանցիկ կառավարում	ՎՋԵԲ ԿՊ լավագույն պրակտիկա	Երևանի քաղաքապետարան ՎՋԵԲ	Նախքան շինարարական աշխատանքներն իրականացնելը և տեղեկատվային մրցույթի անցկացումը	Տեղեկատվային մրցույթի մանրամասներ Աշխատանքի հիգիենա և անվտանգություն	
CO9	<p><i>(Գենդերային հարցեր)</i></p> <p>Որոշել և նշանակել մասնագետ, որը կգրավի հավասար հնարավորությունների հարցերով նոր շահագործողի աշխատակազմում՝ ապահովելու</p>	Խրախուսել հավասար հնարավորությունները կազմակերպության	Հավասար իրավունքների մասին ՀՀ օրենք ՎՋԵԲ ԳՌՆ	Պոտենցիալ շահագործողի ներքին ռեսուրսը ՎՋԵԲ աջակցություն՝	Նախագծի իրականացման փուլից առաջ	Հաշվետու է քաղաքապետարանի՝ հավասար հնարավորությունների հարցերով	Այդ անձին պետք է ընտրել աշխատակազմից և նրան պետք է տրամադրվեն

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	համար <ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքային հավասար հնարավորություններ</li> <li>Ճկուն աշխատանքային ժամեր (ոչ լրիվ աշխատանքային օրվա մոդելներ)</li> <li>Երեխաների խնամքի մոդելներ</li> </ul> Պոտենցիալ հայտատու կազմակերպություններին տեղեկացնել այս պահանջների մասին:	ներսում	ՎՋԵԲ Գ1 ՎՋԵԲ ԳՄՀ ՎՋԵԲ ԿՊ 2	ՎՋԵԲ գենդերային հարցերով թիմը տրամադրում է տեխնիկական աջակցություն պատասխանատու անձի վերաբերյալ		զբաղվող պատասխանատուին  Գենդերային հարցերի վերաբերյալ իրազեկվածություն և պահանջների կատարում	անհրաժեշտ միջոցները (ֆինանսական միջոցներ և արտոնություններ):
CO 10	<i>(Գենդերային հարցեր)</i> Փնտրել և ներգրավել հավասար հնարավորություններով զբաղվող մասնագետ Երևանի քաղաքապետարանում	Ակտիվորեն իրախուսել հավասար հնարավորությունների կիրառումը քաղաքապետարանում Աղբահանողների համար վերապատրաստումների հսկողություն (ուսուցման թեմաներ, ժամանակի և տեղի տեսակետից հարմարության ապահովում կանանց համար)	Հավասար իրավունքների մասին ՀՀ օրենք ՎՋԵԲ ԳՌՆ ՎՋԵԲ Գ1 ՎՋԵԲ ԳՄՀ ՎՋԵԲ ԿՊ 2	Երևանի քաղաքապետարան ՎՋԵԲ աջակցություն՝ ՎՋԵԲ գենդերային հարցերով թիմը տրամադրում է տեխնիկական աջակցություն պատասխանատու անձի վերաբերյալ	Մինչ ծրագրի իրականացումը	Հաշվետու է քաղաքապետարանի՝ հավասար հնարավորությունների հարցերով զբաղվող պատասխանատուին Գենդերային հարցերի վերաբերյալ իրազեկվածություն և պահանջների կատարում	Այդ անձին պետք է ընտրել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից  Այդ անձը կաշխատի ավագ մասնագետների մակարդակում և պետք է ունենա աշխատանքային պաշտոն՝ ներառյալ արտաքին հաղորդակցությունը

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
CO 11	<p><i>(Գենդերային հարցերի կարգավորում)</i></p> <p>Շահագործման փուլում նոր աշխատատեղերի համալրման գործընթացում պետք է ապահովել կանանց և տղամարդկանց համար աշխատանքի հավասար հնարավորություններ: Ավելին, աշխատանքային գրաֆիկները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել կանանց պահանջները:</p> <p>Մասնագիտական վերապատրաստումը պետք է հավասարապես մատչելի լինի կանանց և տղամարդկանց համար՝ հաշվի առնելով գենդերով պայմանավորված աջակցության հնարավորությունները (տես նաև CO 13)</p> <p>Գենդերային հարցերի կարգավորման գործընթացը պետք է մշտադիտարկվի այդ գործառնություն իրականացնող մասնագետի կողմից:</p>	<p>Կանանց և տղամարդկանց համար հավասար պայմանների ապահովում</p> <p>Գենդերային հարցերի կարգավորում</p>	<p>Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ հրամանը</p> <p>ՎՋԵԲ ԳՌՆ</p> <p>ՎՋԵԲ Գ1</p> <p>ՎՋԵԲ ԳՄՀ</p> <p>ՎՋԵԲ ԿՊ2</p>	<p>Նոր աղբավայրը շահագործող ընկերություն</p> <p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>Նախքան նախագծի իրականացման փուլը</p>	<p>Գենդերային հարցերի վերաբերյալ իրագրվածություն և պահանջների կատարում</p>	
CO 12	<p><i>(Բնապահպանական թույլտվություններ)</i></p> <p>Ապահովել, որ ծրագրի համապատասխան փուլում բոլոր բնապահպանական թույլտվությունները առկա են:</p> <p>Թույլտվություններ տրամադրող լիազոր մարմնի ստեղծում, որը կազմված կլինի նախարարությունների և այլ հատկորշված հաստատությունների փորձագետներից</p>	<p>Համապատասխանություն իրավական նորմերին</p>	<p>ՇՄԱԳՓ ՀՀ օրենք</p> <p>ԵՄ - ՇՄԱԳ</p> <p>ՎՋԵԲ ԿՊ 1</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>Մինչ ծրագրային փուլի իրականացումը</p>	<p>Թույլտվությունների ստացում</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
CO 13	<p>(Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր)</p> <p>Պատրաստել աղբահանողների համար իրականացնել Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր՝ ԿՊՎԾ համաձայն</p> <p>Այդ նպատակով իրականացնել լիարժեք մարդահամար, տնտեսական հարցում և սահմանել փոխհատուցման չափը</p> <p>Բացի այդ, առաջարկվում է մասնագիտական ուսուցման աշխատառողովների կազմակերպում՝ աղբահանողների նախորդ կրթության հետ վերաընտեղման նպատակով:</p> <p>Բացի այդ նախատեսվում է սոցիալական և այլ տեսակի աջակցություն, ինչպիսիք են հասարակական տրանսպորտից օգտվելու համար ֆինանսական աջակցությունը և անցումային շրջանի նպաստը: Աջակցություն տրամադրելիս պետք է ուշադրություն դարձնել կանանց և տղամարդկանց համար հավասար պայմանների վրա (օրինակ կանանց առաջարկել վերապատրաստման դասընթացներին մասնակցության ընթացքում երեխաների խնամքի ծառայություններ)</p> <p>Իրագործել և աշխատեցնել ԿՊՎԾ բողոքների մեխանիզմը</p>	<p>Աղբահավաքների համար կենսաապահովման խնդիրներ</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 5 ՎՋԵԲ ԿՊ 1</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p> <p>Հրավիրյալ խորհրդատու</p>	<p>Մինչ ծրագրային փուլի իրականացումը Մարդահամարը և տնտեսական հարցումը կարելի է կազմակերպել 2015-ի հունիս/օգոստոս ամիսներին</p> <p>Վերջնական ժամկետ գրանցումը կատարել մինչ ծրագրի իրականացումը</p>	<p>Աղբատույնի կրճատում, նոր աշխատատեղերի ստեղծում</p> <p>Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագրի իրականացման գործընթացի թափանցիկություն</p>	
CO 14	<p>(Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագրի իրագործում)</p> <p>Ընկերություններում նշանակել</p>	<p>Կորսված եկամտի փոխհատուցում և կենսաապահովման</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 5 ՎՋԵԲ ԿՊ 1</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>Նախորդում է ծրագրային փուլի իրականացմանը</p>	<p>Աղբատույնի կրճատում, նոր աշխատատեղերի</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>Կենսաապահովման վերականգնման պայմանների ծրագրի պատասխանատու: Վարձել հրավիրյալ խորհրդատու և, անհրաժեշտության դեպքում անկախ գնահատող, որոնք կիրականացնեն կենսաապահովման պայմանների վերականգնման գործընթացը (տեղեկացում, լիարժեք մարդահամար, տնտեսագիտական ուսումնասիրություն, հետագա գործընթացներ)</p> <p>Վարձել կենսաապահովման պայմանների վերականգնման գործընթացի իրականացմանն աջակցող հետազոտող (սահմանելու աղբահավաքմամբ զբաղվողների իրական թիվը, վերամշակման ենթակա աղբի գներից ելնելով՝ ճշտել ստացվող եկամտի չափը)</p> <p>Հնարավորության դեպքում, աջակցել ստանալ մասնագիտական վերապատրաստում, ձևակերպել անձնական փաստաթղթերը, օգտվել սոցիալական և այլ տեսակի աջակցությունից, ինչպես նաև՝ աշխատանքի տեղավորման ծրագրերից:</p> <p>Ստեղծել բողոքների արձագանքման հանձնաժողով՝ կազմված փորձառու մասնագետներից: Աշխատանքների ընթացքում ներառել շահառու խմբի ներկայացուցիչներին:</p>	<p>խնդիրներ</p>		<p>Հրավիրյալ խորհրդատու և անկախ գնահատող</p> <p>Բողոքների արձագանքման մեխանիզմներին ծանոթ մասնագետներ</p> <p>(արժեքի համար տե՛ս ESDD 08)</p>		<p>ստեղծում</p> <p>Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագրի իրականացման գործընթացի թափանցիկություն</p>	

**ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ**

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
SP1	<p><i>(Վերահսկողություն)</i></p> <p>Սահմանել արտաքին վերահսկողություն՝ կենտրոնանալով բնապահպանական-տեխնիկական խնդիրների վրա</p> <p>Ստուգել արտաքին վերահսկողության փորձը:</p>	<p>Համապատասխանություն ԵՄ ուղեցույցներին և Ազգային օրենսդրությանը</p>	<p>ԱԼԱՄ                      ՇՄԱԳՓ ՀՀ օրենք                      ՎՋԵԲ ԿՊ 2</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>Նախորդում է ծրագրային փուլի իրականացմանը</p>	<p>Բացահայտել ցանկացած բացթողում բնապահպանական և տեխնիկական հարցերի հետ կապված</p> <p>Իրականացնել բարեկարգման միջոցառումներ, եթե կիրառելի է</p>	
SP 2	<p><i>(Մշտադիտարկում և չափումներ)</i></p> <p>Իրականացնել մշտադիտարկման ծրագիր հետևյալի վերաբերյալ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>Թափոնների ընդունում, ներառյալ թափոնների որակը, հատկանիշները, առավելագույն թույլատրելի խտացումը, (նշում. որոշ ազդեցությունների մեղմացման համար անհրաժեշտ է թափոնների ընդունման վերահսկողություն)</li> <li>Օգտագործվող աղբավայրի ծավալը և կառուցվածքը ըստ տեղագրական չափումներով ստուգումների</li> <li>Աղբավայրի մեքենաների և սարքավորումների աշխատանքային ժամերը</li> <li>Մակերեսային և գրունտային ջրերի, թափոնների ջրերի անալիզ և գազի</li> </ul>	<p>Համապատասխանություն ԵՄ ուղեցույցներին և Ազգային օրենսդրությանը</p> <p>ԲԱԱ խնդիրներ</p>	<p>ԱԼԱՄ                      [ԵՄ թափոնների թաղում]                      Թափոնների մասին ՀՀ օրենք                      ՎՋԵԲ ԶԳ</p>	<p>Աղբավայրի նոր տարածքի շահագործող</p>	<p>Շինարարության և շահագործման փուլի ընթացքում</p>	<p>Տվյալների բազա, որը կխթանի որոշումների ընդունման գործընթացը կապված տեխնիկական, բնապահպանական և սոցիալական բողոքների հետ:</p> <p>Բնապահպանական մշտադիտարկման տվյալների բազա՝ տեղական և ԵՄ պահանջներին համապատասխանությունը երաշխավորելու համար</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>հսկողություն</p> <ul style="list-style-type: none"> <li>Վնասատուների վերահսկողության մշտադիտարկում</li> <li>Աղմուկի մշտադիտարկում</li> <li>Փոշու մշտադիտարկում</li> <li>Օդերևութաբանական տվյալներ</li> <li>Գրասենյակային շինությունների ներսում օդի որակը / մեքենաներում վարորդների խցների ներսում օդի որակը</li> <li>Սոցիալական մշտադիտարկում (նպաստներ, սակագների վերաբերյալ բողոքներ, հավաքման տոկոսը)</li> <li>Առողջության և անվտանգության պրակտիկա և վերապատրաստում (պոտենցիալ վտանգավոր աշխատանքներ)</li> <li>Կապալառուների կատարողական (ներառյալ ԱՀԱ), վստահելի կապալառու ընկերությունների հետ աշխատանքի ապահովում (սա հատկապես կարևոր է ոչ մշտական աշխատող հանդիսացող աշխատակիցների դեպքում)</li> </ul>						
SP 3	<p><i>(Արագ գնահատման պայմաններ)</i></p> <p>Հետևյալի համար պահանջվում է կարճաժամկետ գնահատում և փորձագետի ընթացիկ այցեր՝ տեղանք</p> <p>Անցկացնել ֆաունայի գնահատում՝ նախագծի իրականացման տարածքում և դրա շուրջը (աղբավայրի շուրջը 300 մ բուֆերային գոտիով)</p>	ՎՋԵԲ ԿՊ համապատասխանություն	ՎՋԵԲ ԿՊ 6	Հրավիրյալ փորձագետներ (կենսաբան) (1 տարի՝ 10.000 €)	Նախքան շինարարական աշխատանքները սկսելը	Պատշաճ կառավարում	



h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>ինչպես ներկայացված է YSW_ESIA_A1_01 քարտեզում) Կարմիր գրքում ներառված տեսակների ցանկի հստակեցնելու համար և վստահ լինելու, որ այդ տարածքներում Կարմիր գրքում ներառված կենսատեսակներ չկան: Կարմիր գրքում ներառված կենդանատեսակների պաշտպանությանն ուղղված միջոցները նկարագրված են SP 10-ում:</p>						
<p>SP 4</p>	<p><i>(Մշակութային ժառանգություն)</i></p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային արժեք ներկայացնող գտածոների հայտնաբերման դեպքում իրականացնել դրա համապատասխան տեղափոխում՝ ապահով վայր</p> <p>Մշակել և իրականացնել գտածոների կառավարման գործընթաց</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ համապատասխանություն</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 8</p>	<p>Հրավիրյալ փորձագետներ (լիցենզավորված հնագետ)</p> <p>(1 տարի՝ 3.000 €)</p>	<p>Շինարարական աշխատանքների փուլում</p>	<p>Պատշաճ կառավարում</p>	
<p>SP 5</p>	<p><i>(Հաշվետվություններ)</i></p> <p>Անկախ փորձագետների կողմից մշտադիտարկման և չափումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում և ուսումնասիրություն: Արտաքին կարգավորող մարմինը տեղեկացնում է պահանջներին և հրահանգներին համապատասխանության կամ անհամապատասխանության մասին (այդ թվում՝ մատակարարման շղթայի և կապալառուների առնչությամբ)</p>	<p>Համապատասխանություն ԵՄ ուղեցույցներին և Ազգային օրենսդրությանը ԲԱԱ խնդիրներ</p>	<p>ԱԱԱՄ ԵՄ թափոնների թաղում Թափոնների մասին ՀՀ օրենք ՎՋԵԲ ԿՊ 1</p> <p>[Գենդերային հարցերի մասին տե՛ս CO 9 – CO 11]</p>	<p>Անկախ փորձագետ</p> <p>(1 տարի՝ 10.000 €)</p>	<p>Նվազագույնը տարեկան հաշվետվության ներկայացում կառուցման և շահագործման փուլի ընթացքում</p>	<p>Գտնել բացթողումները և, եթե կիրառելի է, իրականացնել բարելավման միջոցառումներ</p>	<p>Հատկորոշվում է աղբավայրի շահագործողի և Երևանի քաղաքապետարանի միջև պայմանագրում</p>

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
SP 6	<p><i>(ԱՀԱ մշտադիտարկում)</i></p> <p>Նշանակել ԱՀԱ համար ընդհանուր պատասխանատվություն կրող աշխատակից</p> <p>Իրականացնել առողջության և անվտանգության հարցերի շարունակական վերահսկողություն շահագործման ընթացքում</p> <p>Աշխատակիցների առողջության վերահսկում</p>	ԱՀԱ խնդիրներ	ԲԱԱ ՎՋԵԲ ԿՊ 2	Աղբավայրը շահագործողի ներքին ռեսուրսներ	Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման փուլերում	Գտնել բացթողումները և, եթե կիրառելի է, իրականացնել բարելավման միջոցառումներ	Նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի և շահագործող ընկերության միջև կնքվող պայմանագրում
SP 7	<p><i>(աշխատանքի հիգիենա և անվտանգություն)</i></p> <p>Մշակել և պահովել աշխատանքի հիգիենայի և անվտանգության կառավարման համակարգ համաձայն OHSAS 18001</p> <p>Համակարգի շրջանակներում մշակել ծրագրեր և գործընթացներ, որոնք թույլ կտան անդրառնալ խնդիրների, որոնք վերաբերում են, սակայն չեն սահմանափակվում հանդերձանքի, անվտանգության հարմարությունների, անվտանգության վերաբերյալ ուսուցման, վտանգների մասին տեղեկատվության (փոշի, թափոնների ջրեր, գազ, թափոնների վտանգավոր բաղադրիչներ) հացերով</p> <p>ԱԱՄ (անձնական անվտանգության միջոցներ. պաշտպանիչ ակնոցներ, դիմակներ հոտի դեմ, պաշտպանիչ հանդերձանք, շինությունների մեկուսացում, ականջների պաշտպանություն, մեքենաներում վարորդի խցերում օդորակում)</p> <p>Ալկոհոլի և դեղամիջոցների արգելում աշխատանքային վայրում</p>	ԱՀԱՏ խնդիրներ Նվազեցնել հիգիենայի խնդիրը Կրճատել վնասվածքների տոկոսը	ՎՋԵԲ ԿՊ 2	Աղբավայրի նոր տարածքի շահագործող	Շինարարության և շահագործման փուլի ընթացքում	Լուրջ վնասվածքներ և առողջության վատթարացում չկա (օր. լսողության)	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
SP 8	<p><i>(Աղտոտման նվազեցում)</i></p> <p>Իրականացնել աղտոտվածության նվազեցման միջոցառումներ՝ համաձայն ՇՄՍԱԳ Գլուխ 10-ով նախատեսված կետերի, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.</p> <p><i>(ծրագրի տեխնիկական հատկանիշներ)</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Թափոնների ջրերի և աղբավայրի գազի հավաքում, վառում</li> <li>• Լանջի և հիմքի մեկուսացում</li> <li>• Հին տարածքների փորում</li> <li>• Անիվների լվացում</li> <li>• Վառելիքի հետ գործողությունները իրականացնել միայն դրա համար նախատեսված վայրերում. անմիջապես վերացնել թափված վառելիքը</li> <li>• Հատուկ ցանցեր թափոնները ֆիքսելու համար</li> <li>• Ցանկապատում՝ աղբի տարածումից խուսափելու համար: Կիրառել աղբի շարժական ցանցեր և ժամանակավոր ծածկեր</li> <li>• Հնարավորին շուտ թափոնների ծածկում (աղբավայրի գազի միզրացիայի ռիսկ)</li> <li>• Թափոնների ջրում՝ նվազեցնելու համար</li> </ul>	Տեխնիկական պահանջներ և ԲԱԱ խնդիրներ	ՎՋԵԲ ԿՊ 3 ԵՄ թափոնների թաղում ԱԼԱՄ ՎՋԵԲ ԶԳ	Թափոնների թաղման նոր տարածքի շահագործող	Կառուցման և շահագործման փուլի ընթացքում	Հոտի, փոշու և ջերմոցային գազերի արտանետումների հետևանքով առողջությանը հասցրած վնասների նվազեցում, բոլոր մակերեսային ջրերի և վտանգավոր թափոնների կառավարում	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>փոշու արտանետումը</p> <ul style="list-style-type: none"> <li>• Փոշու հավանական առաջացման վայրերում ջրի ցողում</li> <li>• Վտանգավոր թափոնների դասակարգում, ցուցակավորում, կառավարման պլան</li> </ul>						
SP 9	<p><i>(Հող և էրոզիա)</i></p> <p>Իրականացնել աղտոտվածության նվազեցման միջոցառումներ,՝ համաձայն ՇՄՄԱԳ Գլուխ 8-ով նախատեսված կետերի, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պակասեցնել հողային աշխատանքները անձրևների ժամանակ, ձեռնարկել էրոզիայից պաշտպանելու միջոցներ (գետտեքստիլի կիրառում)</li> <li>• Վերականգնման համար օգտագործել միայն տեղի հողը</li> <li>• Պահել փորված հողը առանձին տեղում</li> <li>• Փորել հին տարածքները</li> </ul>	Կենդանի բնական ռեսուրսների շարունակական կառավարում	ՎՋԵԲ ԿՊ 6	Աղբավայրի նոր տարածքի շահագործող	Շինարարական և շահագործման փուլի ընթացքում	Բնական հողի պահպանում, էրոզիայի նվազեցում, փորած-հանած հողի ապահով հեռացում	
SP 10	<p><i>(Կարմիր գրքում ներառվելու ենթական կենսատեսակներ)</i></p> <p>Տեղադրել սողունների ներթափանցումը կանխող ցանկապատ՝ ինչպես ներկայացված է ՇՄՄԱԳ հավելված քարտեզներում: Պարբերաբար վերահսկողություն անցկացնել՝ պարզելու Կարմիր գրքում ընդգրկված տեսակների առկայությունը: Տեղափոխել կենդանիներին, եթե այդպիսիք աղբավայրի տարածքում գտնվեն:</p>	Բնության կենդանի պաշարների կայուն կառավարում	ՎՋԵԲ ԿՊ 6	Նոր աղբավայրը շահագործող ընկերություն	Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման փուլերում	Վտանգված կենսատեսակների՝ պաշտպանություն համաձայն Կարմիր գրքի ցանկի	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎԶԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշներ	Մեկնաբանություններ
SP 11	<p><i>(Անվտանգություն, մուտքի վերահսկողություն / լուսավորություն)</i></p> <p>Իրականացնել աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ համաձայն ՇՄՄԱԳ Գլուխ 8-ի, ներառելով սակայն չսահմանափակվելով հետևյալ քայլերով.</p> <p>Ցանկապատի տեղադրում, որը կխոչընդոտի աղբի տարածումը քամուց և չլիազորված անձանց մուտքը աղբավայր: Զգուշացման նշանների տեղադրում:</p> <p>Ապահովել կողավող մուտքի/խոչընդոտի առկայությունը</p> <p>Ապահովել տրանսպորտի անվտանգությունը՝ կիրառելով արհեստական անհարթություններ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, արագության սահմանափակումներ:</p> <p>Խուսափել գիշերը ծանր տեխնիկա օգտագործելուց, զգուշացնող նշաններ մեծ չափսերի տրանսպորտային միջոցների վրա</p> <p>Լուսավորությունը անհրաժեշտ է բանուկ վայրերում (խաչմերուկ, ենթակառույցների տարածք)</p> <p>Պատշաճ կերպով դասակարգել, մշակել և պահպանել վտանգավոր թափոնները</p> <p>Պահակներ</p> <p>Վթարային պլան պատահարների համար</p>	<p>ԱՀՄՏ խնդիրներ</p> <p>ԲԱԱ խնդիրներ</p> <p>Տեխնիկական պահանջներ</p>	<p>ՎԶԵԲ ԿՊ 2</p> <p>ԱԼԱՄ</p>	<p>Աղբավայրի նոր տարածքի շահագործող</p>	<p>Շինարարական և շահագործման փուլի ընթացքում</p>	<p>«Զրո պատահարներ»</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
SP 12	<p><i>(Սարքավորումների նորացում)</i></p> <p>Իրականացնել աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ համաձայն ՇՄՍԱԳ Գլուխ 8-ի, ներառելով սակայն չսահմանափակվելով հետևյալ քայլերով.</p> <p>Ցածր աղմուկով աշխատող սարքավորումների ձեռքբերում (բեռնատարներ, անիվավոր բեռնիչներ, էքսկավատոր, գործիքներ) և պահեստավորման ժամանակակից սարքավորում</p> <p>Իրականացնել սարքավորումների կանոնավոր սպասարկում</p>	<p>ԱՀՍՏ խնդիրներ</p> <p>ԲԱԱ խնդիրներ</p> <p>Տեխնիկական պահանջներ</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 2</p> <p>ԱԼԱՄ</p> <p>ԵՄ թափոնների թաղում</p>	<p>Աղբավայրի նոր տարածքի շահագործող</p>	<p>Շահագործման փուլի ընթացքում</p>	<p>Արդիական տեխնիկայի առկայություն՝ որպես տեխնիկական պահանջ</p>	
SP 13	<p><i>(Հողի ձեռքբերում)</i></p> <p>Բանակցություններ անցկացնել անտառային տարածքների կորստի և փոխհատուցման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԳՆ անտառային գործակալության միջև</p>	<p>Համապատասխանություն իրավական նորմերին</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 5</p> <p>ՀՀ անտառային օրենսգիրք</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p> <p>«Հայանտառ» ՊՈԱԿ</p>	<p>Մինչ ծրագրի իրականացումը</p>	<p>Հողի սեփականատիրոջ հոտ կապված հարցերի պարզաբանում Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԳՆ անտառային գործակալության միջև բանակցություններ ի արդյունքում: վերահսկելի ուղղակի փոխհատուցում՝</p>	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
						ըստ տարածքի իրավական կարգավիճակի	
SP 14	<p><i>(Հին աղբավայրի փակում)</i></p> <p>Սահմանել հին աղբավայրի փակման գործընթացը:</p>	Համապատասխանություն իրավական նորմերին	ՎՋԵԲ ԿՊ 5 ՀՀ օրենք	Երևանի քաղաքապետարան  Աղբավայրի ներկա շահագործող	Մինչ ծրագրի իրականացումը	Ժամանակակից սարքավորման օգտագործում (օր.՝ գազի փորեր, համապատասխան ծածկեր) փակման արդյունավետ իրականացում մինչև նոր աղբավայրի շինարարական աշխատանքների սկիզբը	
SP 15	<p><i>(Վերականգնում՝ կառուցումից հետո, ծառուղով մեկուսացում և հետագա խնամք)</i></p> <p>Ծառուղիների և այլ բուսատեսակներով ուղիների տնկում՝ բնական տեսարանի բարելավման համար, պաշտպանիչ շերտի վրա բուսականության աճ՝ բնական եղանակով</p> <p>Անտառային ծածկի վերականգնման միջոցառումներ նախատեսված տարածքում</p> <p>Հին աղբավայրի փակման ծրագրի իրականացում՝ ապահովելու տարածքի վերականգնում (օրինակ՝ մեկուսացում, 50սմ-ից 1 մ հաստությամբ հողաշերտով ծածկում, բնական</p>	Կենդանի բնական ռեսուրսների շարունակական կառավարում	ՎՋԵԲ ԿՊ 6	Աղբավայրի նոր տարածքի շահագործող	Ծառուղիների տնկում (շինարարության փուլի ընթացքում)  Բնական ժառանգողություն (փակման պես)	Սահմանափակ տեսանելիություն	

h.	Գործողություն	Բնապահպանական ռիսկեր/ պատասխանատվության ռիսկեր / օգուտներ	Օրենսդրական պահանջ / ՎՋԵԲ կատարողական պահանջ / լավագույն պրակտիկա / ԵՄ ստանդարտներ	Ներդրումային կարիքներ /ռեսուրսներ / պատասխանատվություն	Գործողության ավարտը ըստ ժամանակացույցի	Արդյունավետ իրագործման համար թիրախային և գնահատման չափանիշեր	Մեկնաբանություններ
	<p>վերականգնում՝ առանց ծառերի)</p> <p>Լանդշաֆտային աշխատանքներ իրականացնող ընկերությունից կամ հարակից վայրում իրականացվող շինարարության տարածքից բնական հողի ձեռքբերում՝ աղվայրը հողածածկելու համար</p> <p>Ապահովել ծածկման համար կիրառվող հողի աղտազերծ լինելը</p> <p>Ապահովել հողի ձեռքբերման հետևանքով հավելյալ բնապահպանական ազդեցությունների բացակայություն [գոյություն ունեցող լիցենզավորված հանքավայրերից, բնական հողի ավելցուկ ունեցող շինարարություն]</p>						
SP16	<p><i>(սանիտարական անվտանգության գոտի)</i></p> <p>Ժ Իրականացնել ռիսկերի գնահատում և համապատասխան պաշտպանիչ միջոցառումների ձեռնարկում</p> <p>Ապահովել 750 մ շառավղով կառուցապատման բացակայություն</p>	<p>Խուսափել շահերի բախումից</p>	<p>ԲԱԱ</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>Այն դեպքերում, երբ տարածքում նախատեսված է այլ նախագծերի իրականացում</p>	<p>Ռիսկերի գնահատում</p>	<p>Ռիսկերի գնահատումը պետք է իրականացնի Երևանի քաղաքապետարանը</p>
SP 17	<p><i>(Այլ առավելություններ)</i></p> <p>Երևան-Գառնի ջրատարի վնասված հատվածների վերանորոգում</p>	<p>Խուսափում շահերի բախումներից ԲԱԱ խնդիր</p>	<p>ՎՋԵԲ ԿՊ 4</p>	<p>«Veolia ջուր» (Երևանի ջրամատակարարում)</p>	<p>Մինչ ծրագրի իրականացումը</p>		

**Նկար 1 Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը՝ աղյուսակի տեսքով**



## 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԵՄ հանձնարարականներ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանձնարարական (ՇՄԱԳ) – Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի՝ 2014 թ. ապրիլի 16-ի Հանձնարարական 2014/52/ԵՄ, ըստ որի փոփոխություններ են կատարվել Հանձնարարական 2011/92/ԵՄ-ում, որը վերաբերում էր պետական և մասնավոր որոշակի ծրագրերի ազդեցության գնահատմանը
- Աղբավայրերի վերաբերյալ հանձնարարական՝ ԵՄ խորհրդի՝ 1999 թ. ապրիլի 26-ի Հանձնարարական 1999/31/ԵԽ, որը վերաբերում է թափոնների աղբավայրին

ԱԱՀ՝ Արդյունաբերական արտանետումների մասին (աղտոտման կանխարգելման և վերահսկման համապարփակ) 2010/75/ԵՄ հանձնարարական

### ՎԶԵԲ ուղեցույցեր

- ՎԶԵԲ (2008) բնապահպանական և սոցիալական քաղաքականություն
- ՎԶԵԲ (2010) ջերմոցային գազերի (ԶԳ) արտանետումների գնահատման մեթոդաբանություն, 2010
- ՎԶԵԲ (2013) գենդերային ռազմավարական նախաձեռնություն
- ՎԶԵԲ (2011) գենդերային 1-ին մեթոդական ուղեցույց
- ՎԶԵԲ (2010) գենդերային հարցերով ուսումնասիրությունների անցկացման մեթոդների հավաքածուներ 1 և 2

### Հայաստանի օրենսդրություն (ՀՀ օրենք)

- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 21.06.2014
- Թափոնների մասին ՀՀ օրենք, 2014 թ. -ի նոյեմբեր
- ՀՀ անտառային օրենսգիրք

### Այլ ստանդարտներ

- Աշխատանքի միջազգային կազմակերպություն (2014) (Միջազգային աշխատանքային ստանդարտներ և կոնվենցիաներ)
- Լավագույն տեխնիկական միջոցները՝ աղբավայրերի աշխատանքների համար
- Շրջակա միջավայրի պահպանման գործակալության (Իռլանդիա) վերջնական տարբերակի նախագիծ